



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 42

ՅԵ ՇԱՐԱՐ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱՌԱՌԱՑ ՀԱՄԱՐ	ԲԱՐՏԱՍՀՄԱՆԻ
Տարեկան 50 ՂԸ.	Տարեկան 54 ՂԸ.	Տարեկան 42 ՖԲ.
Վեցամեայ 25 .	Վեցամեայ 27 .	Վեցամեայ 6 .

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԺԱՌԱՑՈՒՄ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՑՆԵՐՈՒ, ՇՂԹԱՑՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պեյ խանին սակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուղարկուիք ընէ՛ք ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեկուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին։

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ՋԵՆԻԹԵ՛ր քե՛ Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գումարացիք պայմաններով։

Մանօր. — ՋԵՆԻԹԵ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստանաճդեսին մէջ ամենէն բարձր պարգէտին արժանացած են։

Հատոր 40 փարսա

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԱՌԻՄԻՆԵԱՆ

(Տ. Ա. ԱՍԱԴՐԻԱՆ) — شرکت مرتبه مطبعه — باب مال حاده سنه ۱۳۲۵

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի ճառասէսի քիւ 52

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ


ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԹԷՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

Ե Ի

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ

ՀՈՏԱԻՏ ԹԷՅԵՐ



Հ Է Ր Ճ Ա Յ Ի

ԱՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ չղթայներու, գրպանի պատի և քանսօլի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաև ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօաֆիէներ, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաև կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիսիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքին մէջ միակն է, որ չահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

Ա Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկ մնացեալ գումարին համար շարաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՅ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻՒ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն դժուարահաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50-3

Շարաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 41

ԵԱԲԱԹ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հուսանկար Սեփան Ակայեանի: Գեղարուեստ մեր մեջ. — ԼԵՒՈՆ ԵԱԹՐԵԱՆ:
Այցեյութին մը մեր Հիւանդանոցը. — ՍՏԵՖԱՆ ԽԱԶՈՒՆԻ: Պժգանք (Ոսանաւոր). —
ՍՈԿՐԱՏ ՍԱՐԲԱՅԵԱՆ: Աշխանային մտածումներ. — ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ: Քիթին
մեջ մասնոց. — ՄԻՀՐԱՆ ԻՍՊԻՐԵԱՆ: Մրակցական նախականի. — ՄԱԲՐՈՒՀԻ:
Մայրն ու աղբիկ. — Վ. Փ.: Արուեստագործի մը յուշերը. — ԱՇՈՏ ՄԱՏԱԹԵԱՆՑ:
Սարքաւի զիւղադարձը. — Վ. ՓԱՓԱԶԵԱՆ: Եւրոպական յուրեր:



ՍՏԵՓԱՆ ԱԿԱՅԵԱՆ

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԸ ՄԵՐ ՄԷՁ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ձե՛մ գիտեր ինչո՞ւ դառն , հեգնական ժպիտ մը կ'ուրուագծուի ամէն անգամ երբ կը մղուիմ գեղարուեստի մասին ու է բան խօսելու կամ գրելու պատեհ առիթով մը : Անիրաւութիւն պիտի ըլլար ըսել թէ գեղարուեստասէր ժողովուրդ մը եղած ենք :

Վերջին յիսուն տարիներու շրջանին մէջն է լոկ ս'ը գէպ ի գեղեցիկ արուեստները տաք վերաբերում մը սկսած է ծայր տալ մեր մէջ , յայտարար նշանն հանդիսանալով մեր քաղաքակրթութեան սանդուղէն աստիճան մը ևս բարձրանալուն : Ու ասոր համար է որ մեր մէջ միշտ աննշմար անցած գացած են շատ մը արուեստագէտներ յառաջապահ ու դժբաղդ ռահվիրաններն հանդիսանալով այն գեղարուեստական փոխանցման շրջանին ուր կը գտնուինք հիմա , և իրենց անշուք կենցաղին գնով դրած հիմերը այն շէնքին որ վաղը միւս օր պիտի բարձրանայ :

Ստեփան Ակայեան այդ ռահվիրաներուն առաջին կարգին մէջ կրնայ դասուիլ իրաւամբ . իր գործերուն կատարեալ զաւակը , բառին ամենալայն իմաստովը , որ համբերութիւնն ունեցած է գեղարուեստի անհուն սիրովը դօտեպնդուած ամէն զրկումներու տոկալու , գեղարուեստի ճաշակը մեր մէջ մտցնողներուն գլխաւորներէն մէկն ըլլալով :

Հոս գովեստ մը հիւսել չ'է նպատակս իր անունին շուրջը . երբէ՛ք : Արդէն իր կատարած գործը ինքնին կը խօսի արուեստէ հասկցողներուն՝ սրտնք մատի վրայ դեռ կը համրուին դժբաղդաբար մեր մէջ :

Իրմով շատեր գրամ չահած են , որուն օրինակը արդէն վերջերս կարգացուեցաւ « Մանգումէ » ի մէջ : Երբէք դրամապաշտ մէկը չ'է եղած , ու իր արուեստին գեղեցիկ ծաղիկները ցրուած է հոս ու հոն , իր կարողութեան վրայ ապահով մարդու անփութութեամբ : Համակրած ու սիրած եմ այս աղնիւ արուեստագէտը , և իր դէմքը որ ահա աչքիս առջեւն է , արուեստագէտի ցոլարձակ դէմք , անորոշ քմիծաղի քօղով մը ծածկուած , կ'արտայայտէ հոգեկան վիճակները մեր արուեստագէտներուն՝ որոնց գլխաւորներէն մէկը ի'նքն իսկ է արդէն :

Ոչ ոք իրեն չափ թերեւս մեր արուեստագէտներուն մէջ իր իտէալին փարած , և այդ իտէալին հասնելու համար անլուր ու անօրինակ դժուարութեանց է հանդիպած : Եւ հազար նիւթական դժուարութիւններէ ետք է որ կարողացած է կայս. Գեղարուեստից շրջանը աւարտելու , և արհեստակիցներու հակակրութեան մէջէն ինքնօգնութեամբ ուռճացած է օր օրի իր գեղեցիկ տաղանդը , տալու համար մեզի այն գեղեցիկ արտագրութիւնները որ իր անունին փառապսակը կը կալմեն :

ԼԵՒՈՆ ՇԱԹՐԵԱՆ

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ ՄԵՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՅՐ

Կիրակի օր մըն էր ամենուն պէս ես ալ կը փափաքեմ երթալ հոն՝ այն մեծ հաստատութեան մէջ՝ քննական պտոյտ մը կատարելու, որուն հիւանդանոց անունը կ'ուտան, հոգ չէ՝ թէ ան աւելի պատասպարան մըն է, սիրտանքի առժամեայ օթեւան մը ախտաւարակ հոգիներու:

Հոս հոն ծոյլ թափառումներէ վերջ, փափաքը կ'ունենամ պզտիկ այցելութիւն մ'ալ տալ հիւանդանոցի կանանց բաժնին: Ու կանցնիմ դռնէն՝ ուրկէ ներս Գուրջ կ'ըլլայ մարդուն մոռած ման միակ առարկան, կը քալեմ չորս դիւ ուշադիր ակնարկներ նետելով ու աչքերս յանկարծ կը հանդպին հիւանդի մը՝ որուն վրայ կը գամուին կարծես:

Աղջիկ մըն է ան, կողմնակի հակած անկողնին մէջ, զիս տեսնելուն շտկուելու, ինքզինքը ամբողջելու ձեւեր մը կ'առնէ ու ես առիթը չեմ կորսնցուներ զինքը ուշադիր զննելու: Ինչ աղուոր աչքեր Աստուած իմ, խոշոր ու աղեղնաձեւ պտուկած են իր յօնքերուն պերճ ու հոյակապ կամարին տակ, սեւ ու երկար արտեւանունքը կարծես ներդաշնակ պտիկ մը կը հիւսէ այդ զոյգ մը գունդերուն շուրջ՝ որուն մէջ Անհունը կայ, ու մէջի ցլքերը ալ մթապներ են ու տըմոյն լոյս մը միայն կ'արտացոլեն՝ հազիւ նըմարելի, բայց այդ պատկերը ինձ համար ուշագրաւ է ու դիւթիչ, ես հոգ է որ կը տեսնեմ իմ երազած աղուորութիւնս: Ինծի կը նայի պիչ պիչ աչքերը յառած, կարծես թէ հին ծանօթներ ենք մէկմէկու: Կ'անցնիմ իր առջեւէն. ու ահա հատկո՞ւր, հիւանդագին ձայնի մը մեղմ թրթռումները կը հասնին ականջիս, հազիւ լսելի:

«Միւսիւ Լեւոն, միւսիւ Լեւոն» ձայն մը կ'ուզայ ետեւէս, կը դառնամ տեսնելու թէ ո՞վ է: Ու կը զարմանամ երբ կը տեսնեմ թէ նոյն ինքն է: Ձեռքովը զիս իր քով կը կանչէ ու ես կը մօտենամ իրեն:

«Մայրիկս ինտոր է, կը տեսնա՞ս կոր» — կը հարցնէ: Ու կ'սկսիմ խորհիլ՝ թէ ապահովաբար զիս կը նմանցնէր մէկու մը՝ որ է՛հ ո՞վ գիտէ թերեւս պզտիկ յիշատակ մը

պահած ունի իր ցրուած յիշողութեան մէջ:

«Իմին անունս Ստեփան է կ'ըսեմ»: Անգամ մ'ալ ուշադիր կը նայի դէմքիս ու մատները բերնին մօտեցնելով, աչքերը կը խոնարհեցնէ: Ու անմիջապէս տփռոյն, դունաթափ դէմքը կը շառագունի՝ որ սակայն չի վրիպիր իմ խուզարկու աչքերէն: Ու կը պատասխանէ,

«Ա՛Ք կ'ընես, քեզ ուրիշ մէկուն նմանցուցի» ու այս նախադասութիւնը կ'ըսէ այնպիսի շեշտով մը՝ որ սիրտս կ'արկնէ:

«Հոգ չէ, կ'աւելցնեմ զսպելով յուզուումս, եթէ ըսելիք մ'ունիս ես ալ կրնամ ըսել մայրիկիդ, դուն ըսէ՛ ինծի»:

Ու երբ ան կ'երկմտի դեռ որոշում մը տալու, ես արագ ակնարկ մը կը նետեմ, քովի պատէն վար կ'ախուած պիտակին. անոր ինքնութիւնը հասկնալու համար: Անունը, Աղաւնի, տարիքը քսան եւ մէկ, անմիջապէս ասոնք է որ կը հանդպին աչքիս, ու ալ չեմ ուզեր հասկնալ հօրը անունը, եւ ուրիշ մանրամասնութիւններ: Բնական վայրը իրեն կը հարցնեմ, նորէն յայտնելով՝ թէ ես իր փափաքը պատրաստ եմ կատարելու:

«Խառնեղցի եմ» կ'ըսէ իսկական աչքերը վեր վերցնելու ու ոսկրոտ, վտիտ մատներով՝ վայելչօրէն հիւսուած սեւ մագերուն խուրճը կը քրքրէ: Դէմքը դալկացած է ալ, գրգռումի, ցանկութեան ու հրապոյրի ցոլքերը, մարէր տնկետացեր են ալ, այնպէս որ անցնողը հազիւ աչքին ծայրովը կ'ուզէ դիտել այդ աղջկը: Անոր դէմքին վրայ պէտք է կարդալ ամբողջ դառնութիւնը ընտանեկան տռամներու, ու հոն պէտք է պրպտել տգեղ ու վատ արդիւնքը, ընկերային աղտոտ կեանքերու: Մարմինը վտիտ՝ ծիւրեր է ալ ու տռիփի ո՛ր եւ է հեշտանք չ'առթէր ո՛չ մէկուն: Բայց ինձ համար այդ դալկացած դէմքը գրաւիչ է: Կը բարեգարդեմ իր վտիտ պատկերը: Ու հոգ կը տեսնեմ այդ աղջկը իր երբեմնի զգլխիչ հրապոյրին մէջ, իր սեւ աղու աչքերուն շանթահարիչ մոգութիւնը կը մտաբերեմ, ու կ'ըսեմ իւրովի թէ քանինե՞ր արդեօք իրենց լուռ խնկարկումի խորանն ըրած են զայն, ու այդ աղուորին գգուանքներուն տակ ապրիչ

երազա՛ծ են: Ու հիմայ որ հիւանդ է, լքումի ապերախտ կուռքին գիրկը նետէր նն վայն, որպէս զի հոն հատցնէ իր արդէն հատած, սպառած կեանքը:

«Ի՛նչ ցաւ ունիս կ'ըսեմ իրեն շեշտո՛վ մը՝ ուրկէ կ'ըղգածուի: ու կարծես՝ կուահեւով իմ՝ իրեն հանդէպ ունեցած տպաւորութիւններս, սիրայօժար կը պատասխանէ:

«Ասկէ առջի բժիշկները ըսին թէ սատւըճան ես, բայց իմ սիրտս կը ցաւի... Հոս հարցուցի անոնք ալ «պրոնշիտ» է ըսին, աս ցաւն ալ շատ պանելէս եղաւ. քէրկէֆին վրայ շատ կը ծռէի անկից եղաւ:

Նորէն աչքերս հոն պատը կը քթթեն, ախտանունի ցանկը կը նայիմ ու կը կարդամ. «tuberculose généralisée»:

«Ես չի պիտի աղէկնամ. անանկ կ'երեւայ էոր կ'ըսէ ան. տօքթոռները կ'անցնի կ'ըսեն էոր... ասկէ ամիս մը առաջ բան մը չուէի: Դիշեր մը սուռառէէն դառնալուս սիրտըս ցաւ մ'առաւ, ու ատ ցաւը ինծի աս հալը ձգեց»: Այսքան էր պատմութիւնը, պղտիկ թէեւ, բայց ամբողջ հոգեբանութիւն մը կար, անոր մէջ: Ատիկայ անկեղծ խոստովանութիւնն էր իր կեանքին, եթէ վերապահութիւն մը կար, այն ալ արդէն հարկ չէր մնար ըսելու, ես արդէն կուահած էի: Զոհ մըն էր խեղճ աղջիկը. մին այն զոհերէն՝ որոնց թիւը շատ է:

Կ'անցնի ըսեր են տօքթոռները: Այո՛, Կ'անցնի աղւոր աղջիկ, եւ վստահ եղիր թէ պիտի անցնի ալ, բայց այն ատեն միայն, երբ կեանքդ ալ միասին անցնի՛, ու հոգի՛դ անունիդ արժանի աղանձի մը պէս թառի անհունութեան ծոցը լալու համար հոն իր զրկանքի ցաւը:

Անմիտները, «tuberculose généralisée» զերեր են: Ախտանուն մը, ու նորելուկ բառ մըն ալ կպցւեցեր են: «tuberculose» ու միանգամայն «généralisée»: Բայց այդ չէր ապահովաբար հիւանդութիւնը այդ աղջկան, այդ հիւանդութիւնը՝ բժիշկներու գիտութիւնը չէր կրնար վերլուծել, այլ միայն հոգեբաններու հետազօտիչ աչքերը կրնային երեւան բերել, այն վիճակին սաուգութիւնը զոր ունէր այդ աղջիկը ու անոնք ապահովաբար «Տգիտութեան զոհ» անունը պիտի տային այդ հիւանդութեան:

ՍՏԵՓԱՆ ԽԱՉՈՒՆԻ

Պ Ժ Պ Ա Ն Ք

Ա՛յ կը բաւե՛ որքան խիղճըս տանցեցիր, Ուրումակարդ ա՛յ հեռացո՛ւր իմ աչիւն, Սեւ աչքերդ, արծիւին պէս բարձրաթիւ, Որք հոգույս մեջ տառապանքներ կը ձրգեն:

Տուայտանքս, վրսե՛մ, անգութ, հոգեկա՛ն, Բու ծայրայեղ զայրոյթովդ, ո՛վ աղջիկ, Կը բարդուի, ակնարկներդ ալ մոգական՝ Սեւ մը արիւս մեջ կը ձրգեն գերդ ջղջիկ:

Եւ կրգաւ թե ես կը հիւծիմ առ տակաւ, Իրիկունան յո՛ւռ վերջայնային պէս շիկնո՛ս, Անո՛ր պէս բա՛րի, անո՛ր պէս վե՛հ, արագրաւ Որ կը մարի՛... հորիզոնին մահուան մօտ:

Ես մահուան վեհ սարսուռները սոսկ կ'զգամ, Բայց դո՛ւն, խայրող իծի մը պէս թունաւոր Այգերովդ հոգիս կ'այրես շա՛տ անգամ... Ես քեզ կ'ասեմ... մահուան մը պէս մօտաւոր:

ՍՈՎՐԱՏ ՍԱՐԲԱՅԵԱՆ



ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱՆ 1805

Կ. Պոլիս, Մեքանի փողոց, թիւ 57

Օսմանեան Պատմութիւն միւնչեւ մեր օրերը Մ. Աշէնան Ղրշ. 4

Գոհարմատենիկ, երկսեռ վարժարաններու ուսանողներու ընթերցման արժանի լաւագոյն դասագիրքը Ղրշ. 5

Զրուցատրական Ընթերցարան. տարրական կարգերու. իր տեսակին մէջ բոլորովին նոր Ղրշ. 3

Մանկավարժական Քերականութիւն. Գ. մաս. պատկերներու վրայ իր անմասն ոճովը կը սորվեցնէ Հայերէն Քերականութիւնը Ղրշ. 4

Հայերէն Լեզու կամ Վարժութիւն Գրաբարի, կ'ուսուցանէ գրաբարը հասկնալ ու թարգմանել, առանց հոլովները ու բայերը ի բերան սովորեցնելու: Ղրշ. 4

ԿԱՐՃ միջոցի մէջ Անգլիերէն կամ Ֆրանսերէն սովորել փափաքողներու միակ գիրքը ՄԱՅՍԹԵՐՍՇԱՖԹ ՍԻՍԹԵՄ. 15 տետրերու գինը Ղրշ. 30

Առողջաբանական Մարմնամարդութիւն. 45 պատկերով, առանց գործիքի. ամէն տուն պէտք է ունենայ այս գիրքէն Ղրշ. 5:

ԱՇՆԱՆԱՅԻՆ ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

ԱՇՈՏ ՄԱՏԱԹԵԱՆՑԻՆ ըր՝

«Խորհակուած Գեանֆեր»-ը գրած է:

Պողոտ մը ընկելու հոն՝ Թաքսիմի պարտէզին մէջ կը սկիտկայի, մեր գրականութեան բարձրացումին եւ կիներուն ... անկումին վրայ մտածելով:

Աշնանային զով հով մը կը փչէր եւ ծառերու ձիւղերը իրարու պլուելով կը սիրաբանէին նոյնը ընելու հրաւիրելով Թաքսիմի. դեղնած տերեւներու վրայ պտղտուղ քանի մը հազուագիւտ զոյգերը:

Ու՛ ձեռքերս կապած կռնակս, մարած սիկաւ մըն ալ չըթուեցիս ծայրը, կ'երազէի՝ բանաստեղծի սոսոսիք մը չինելով ինքզինքիս:

X

Դեռ քանի մը ամիսներ առաջ՝ երբ ծառերը նոր կը հագնէին իրենց կափ կանանչ շրջագրեւորները, երբ ծաղիկները նոր կը գունաղեցուէին, երբ երկինք պայծառ էր եւ արեւը փայփայէր, երիտասարդներու եւ երիտասարդուհիներու խումբեր՝ թեւ թեւի՝ կը լեցնէին պարտէզը, իրենց զուարթ քրքիջներովը թնդացնելով պուրակները:

Ծառերու ետին՝ բալիզառեաներ՝ դրացիի աղջիկներուն կը դարպասէին եւ ծաղիկներու մէջէն՝ նպարափաճառի endimanche աշակերտներ՝ սպասուհիներու եւ փառամաններու կը ջանային բացատրել իրենց հոգին գալարող կրակը:

Բայց, հիմա, երբ ծառերը սկսած են արդէն մերկանալ, երբ ծաղիկները մեռած են, երբ երկինք տխուր է եւ արեւը՝ պաղ, ամէն մարդ լքած է իր երբեմնի սիրական պարտէզը, ուր ա՛յնչափ հաճոյքներ վայելած էր. ո՛ր մարդկային ապերախտութիւն:

Դրան առջեւ դրուած կիշիին մարդուկը ի զուր յաճախողներու կը սպասէ, որոնք դրան առջեւէն կ'անցնին եւ անգամ մը իսկ չեն հաճիր ակնարկ մը նետել իրենց սիրականին:

Միայն ինծի նման քանի մը ցանցառ մենամոլներ են որոնք կը յամառին տակաւին

պլցել հին սիրականը եւ ատեն ատեն հոն կ'երթան՝ զայն տեսնելու եւ անոր որպիսութիւնը հարցնելու համար:

Ինծի հետ մէկտեղ քանի մը սիրամուդեռատի զոյգեր ալ կան, որոնք աշնանային պարտէզին մենութեան մէջ կուգան փրնտուել իրենց հոգիներուն միութիւնը:

Անոնք աւելի երջանիկ պիտի ըլլային, եթէ կարենային Սահարայի անապատը երթալ աչքերէ հեռու, մարդերէ հեռու, աղմուկէ հեռու, միմիայն իրարու նուիրուած ու իրարու մօտիկ ապրելու համար:

Ժամերով կը պտըտին ու ժամերով կը խօսին իրարու ականջին եւ եթէ տարի մըն ալ հոն մնան, ապահովաբար պահ մը իսկ չպիտի լռեն:

Ի՞նչ կրնան ըսել արդեօք:

Շաքարի հրապարակը թէ Սակարանի օրուան գիները, Ծայրագոյն Արեւելքի քաղաքականութիւնը թէ Մ. Մամուրեանին յօդուածները...

Ո՛վ գիտէ:

Սակայն, վաղը, երբ ձիւնը պիտի փչէ պարտէզին մերկ ծառերուն մէջէն, մե՛նք ալ վերջապէս պիտի լքենք՝ ուրիշ տեղեր փնտռելու համար մեր դրօսանքի վայրերը:

Նշանածները մանալիպիճիի խանութներուն թաւաղապատ սենեակները պիտի ելլեն՝ հոն աւելի աղէկ կարենալով ըմբռնել իրենց տե՛ս-ձ-տե՛ս եւ այս տողերը գրողն ալ պիտի երթայ գարնջրատունի մը վառարանին քով շարունակել իր խոկմունքները:

Եւ պարտէզը պիտի մնայ լքուած, մայրի, միսմինակ:

Ձմեռը, արգեօք ո՛րչափ պիտի ձանձրանայ:

Անիկա որ վարժուած էր միշտ զուարթ քրքիջներ լսել եւ դեռատի սրտերու փրթութումներու ներկայ ըլլալ միշտ, պիտի յօրանջէ, անյուշօրէն պիտի յօրանջէ՝ երազելով իր սիրուած երջանիկ ժամանակը:

Ու ծառերը զլուխնին պիտի օրօրեն՝ ցա-

ւակցելով իրեն եւ հովը — ծերունի մամիկը — մերկ ճիւղերուն մէջէն պիտի երգեր:

×

Կիներուն կեանքն ալ՝ նման սլաքաճի կեանքը չէ՝ միթէ:

Տարբերութիւն մը կայ միայն երկուքին մէջ. կնոջ աշունը պարտէզին աշունէն աւելի դառն է, աւելի ցաւագին, քանի որ մէկը կը զգայ, իսկ միւսը անտարբեր է:

Կինն ալ, երբ երիտասարդ է, աղուոր է, զուարթ է, պաշտողներու խումբեր կը շրջապատեն զայն, երկոտասանեակ սիրտեր անոր տոտիկներուն տակ կը դրուին, երկոտասարդներ՝ անոր սիրուն՝ իրարու հետ կը կռուին, իրա՛ր կը սպաննեն եւ երբեմն ալ ... ինքզինքնին, հազարաւոր ոսկիներ կը նուիրուին անոր, անոր մազին մէկ թելը միլիոններ կ'արժէ ոմանց համար, անոր քուրումը մէկէ աւելի սիրտեր կը դնուցնէ, անոր մէկ ժպիտը երջանիկներու լեզէններ վը շինէ, իսկ մէկ բառը՝ արքայութիւն կը զրկէ իր պաշտողները, անոր մէկ «այո՛ւն» թաւաճանճանի տասը ճոխէն աւելի կարեւոր է, անոր մէկ քմայքը հրաման է, եւ անիկա՛ իր պաշտողներուն պաշտումներէն խնդարկուած՝ կ'անցնի կեանքի մէջէն անհոգ ու անփոյթ, զոհ ու թեթեւ, երջանիկ ու զուարթ, առանց մտածելու վաղուան:

Սակայն, «վաղը»-ն կուգայ, «վաղը»-ն անխուսափելի է: Վաղը՛ն տխուր է:

Վա՛ղը, կինը որ դեռ երէկ երիտասարդ էր, աղուոր ու զուարթ, կը հիւընդնայ:

Եթէ հիւանդութիւնը պարզ ու թեթեւ է, ամէն մարդ իր շուրջն է միշտ, որպէսզի, վաղը, երբ աղէկնայ, վարձատրէ զիրենք իր հրապոյրներովը. մի՛շտ անձնական շահ — ու խնդիր:

Բայց, եթէ ծանր է անոր հիւանդութիւնը, պաշտողները հետզհետէ կը հեռան անոր անկողին քովէն, անոնք որոնք անթիւ էին՝ տակաւ կը նուազին. անոնք որոնք յաւիտենական սէրեր կ'ուխտէին՝ վատաբար կը փախին, անոնք որոնք անոր մէկ քահնային համար շամբանիայի շիշեր կը բանային եւ անոր մէկ քմայքը կատարելու

համար պանքտումներ կը վառէին լուցկիով, հիւսա ոչինչ կը զոհեն՝ որպէսզի անհրաժեշտ դեղերը գնուին:

Աղուոր կինը, երէկ երիտասարդ էր ու կը խնդար, եւ ամէն մարդ անոր համար կը խենդենար, բայց, այսօր, աղուոր կինը հիւանդ է ու կուլայ, եւ ոչ ոք անոր երեսը կը նայ:

Միայն քանի մը ցանցառ մենամոլներ են նորէն, որոնք կը յամառին չլքել զայն իր հիւանդի անկողինն մէջ, ջանալով միսթարել անոր ցաւերը եւ սփոփել անոր վիշտերը:

Սակայն, ասոնք ալ որ սի՛րա ունին իրենց կուրծքին տակ, դրա՛մ չունին իրենց քսակին մէջ:

Իրականութեան դա՛ռն հակասութիւնը: Երջանիկ է, եթէ մեռնի. ու անոր դաւաղին ետեւէն ո՛չ ոք պիտի տեսնէք, ո՛չ այն պաշտողներու լեզէնները, որոնք իրենց հայրիկներուն հարստութիւնները կը դնէին անոր առջեւ, ո՛չ այն անթիւ սիրահարները որ անոր մէկ ժպիտը կը մուրային ո՛չ ալ խնկարկուններու այն մեծ խումբը, զոր այնչափ աստե՛ն զուարճեցուցած ու երջանիկ ըրած էր:

Հիւանդին ո՛վ կը նայի. — ո՛չ ոք: Մեռնողին ո՛վ կը հետեւի. — նորէն ո՛չ ոք:

Միայն, նորէն քանի մը ցանցառ մենամոլներն են, չխաբող բարեկամները, ճշմարիտ անձնուէրները, անշահախնդիր սրտակիրները, ազքատ գուցէ մամոնայով, բայց հարուստ զգացումով, որոնք իրենց դժբաղդ բարեկամուհիին դաւաղին կը հետեւին, վերջին «երթաս-բարով» ըսելու համար:

Ու եթէ մահը չուզէ գալ, անխուսափելի աշունն է, կնոջ աշունը, մահէն աւելի սոսկալի այս տեսակ կիներու համար, որ իր պաղ պատանքին մէջ պիտի առնէ զայն:

Լաֆոնթէնին ճպւղն էր այն, որ ամբողջ կեանքին մէջ ուրիշ բան չէր ըրած՝ բայց եթէ երգել, պարել ու խնդալ, առանց աշունին մտածելու:

Ու աշունը — որուն չէր սպասէր ամենեւին — կուգայ. իր ամբողջ դառնութիւնովը, տխրութիւնովը, աղտոտութիւնովը:

Անրի՛ծ ճակտին վրայ խորշումներ կը գըծ-

ուին, փայլուն աչքերը կը սկսն մարիլ, այստեղուն վարդ գոյնը կը տփգունի, մարմինը որ ա՛յնչափ պինդ էր, կը թուլնայ, կը կակուղնայ, ձայնը կը մարի...

Ու պաշտողները տակաւ կը հեռանան. ատենօք ամէն մարդ կ'ուզէր զայն ունենալ, հիմա ո՛չ ոք կը մօտենայ իրեն:

Ու խեղճ կիներ, մոռցուած, ծերացած ու լքուած, իր կեանքին վերջին երկար օրերը կը քաշկուտէ հիւանդանոցներու մէջ. թըշուառութեան մէջ...

X

Բերայի շիտակ ճամբուն վրայ մութացկանուհի մը կայ:

Գիրուկ կին մը, պառաւցած հիմա, բայց որուն զիմագիծերը անցեալ գեղեցկութիւն մը կը մատնեն, կոյր աչքերը՝ խառն խառն բացուած՝ յառած դէպ ի անխորտակէտ մը. — ո՛վ գիտէ ինչ բանի կը նայի այսպէս անքթիթ. թերեւս իր անցեալին...

Շատեր կը կարեկցին անոր եւ տասնոց մը կը դնեն չարունակ բաց մնացող ափին մէջ:

— Գիտե՞ս այս կինը ո՛վ է, ըսաւ անցեալ օր բարեկամ մը, որ քառորդ դարէ ի վեր կ'իսալխարհիկ կ'ինքերու աշխարհին մէջ կ'ապրի:

— Ծանօնալու պատիւ չունիմ:

— Ես այդ պատիւը ունիմ. այս կինը իր ատենին ամենէն սիրուած, փայփայուած ու ամենէն ճոխ հորիզոնականուհին եղած է:

Այսչափ խոսեցաւ բարեկամս:

Համառօտ դամբանակա՛ն:

Ու տասնոց մը ձգեց ափը այդ մութացկանուհիին, որ իր ժամանակին ամենէն սիրուած, փայփայուած ու ամենէն ճոխ հորիզոնականուհին եղած էր:

X

Ահա՛ այս երազանքներուն մէջ թաղուած կը սկիտկայի թագաւոր պարտեզը, երբ դեռատի օրիորդ մը անցաւ քովէս:

— Կապու՛ճ, Կապու՛ճ, Կապու՛ճ... ձայնեց գեղտնի աղջիկը Եւայի:

Սթափեցայ խոկմունքներէս:

— Հրամայեցէ՛ք, պատասխանեցի:

Օրիորդը շիկնեցաւ:

— Ներեցէ՛ք, պարո՛ն, ձեզի չեմ, պըզտիկ շնիկս կը կանչէի կոր, ըսաւ՝ պուլտոկ շուն մը ցուցնելով:

— Զեր չունին անունը...

— Կապու՛ճ է:

— Մէնսի, օրի՛որդ:

ԵՐՈՒԱՆԴ ԹՕԼԱՅԵԱՆ

ՔԻԹԻՆ ՄԷՋ ՄԱՏՆՈՑ

Բժշկական յայտնութիւն մը

Կէս օրին, երբ Էրկինք վար մաղէ իր հուրքը, ծառերու զով հովանիէն զուրկ մեր մամեր՝ ճաշիկ հարսներն ու ճէյրան աղջիկները կ'առաջնորդեն իրենց մէկ յեքերիկին տաններեւը, ուր չեն կրնար թափանցիլ արեւին ու... արուն հո՛ւր նայուածքը:

«Եթ դառնալիկում գմբէթին տակ, որ մեհեանի մը երեւոյթն ունի, եւ ուր կէստուններն իրա՛ցնէ կուռքի՛ր կը թուին, խորհրդաւոր լուծի՛ւն մը ու մթաստուեր տխրութի՛ւն մը կը տիրէ յաւէտ:

Հո՛ղ, մէկը ասեղ կը ծեծէ՝ ճերմակ պատառին վրայ հակած իր հրեշտակի դէմ, քը, միւսը գիկզակ ու արագ կը խաղցնէ իր թէք շիշը, օյաի փրփուրներ թափելով դարձաւ, մէկալը իր կարապի պարտնոցին երկու քովերէն կախած թեռի գոյն զգոյն թեւեր՝ գեղարուեստիկ գուլպաներ կը հիւսէ, եւ ուրիշ մը՝ Պէնէլոպի՛ն պէս աշագեղ, հորէն դուրս կ'ոթողած իր մարմար մարմինին հրաշագեղ կ'իսանդրին՝ կտա՛ւ կը գործէ պարիկի մը վայել զիւրաշարժ ու վարժ ձեռքերով:

Եւ երբեմն ալ, բարեղէպ առիթով մը կտա՛ իբր շնորհ՝ երբ կեսուրները հեռանան ջահիլներու այդ աղւոր երաման, ա՛լ մէջտեղ կը բերուին զիլլի տե՛ֆերն որոնք՝ գեղունիներու գեղակերտ մասներուն միջեւ՝ սիրտն՝րը կը գինովցնեն, եղիկի եղանակներն ալ ոտքերը կ'առնեն, Եւ պարը կ'եռա՛յ: Արծաթ ձայները՝ տաններեսի գմբէթը կը վերցնեն, ու ոտքերու դոփուներ՝ գեաի՛նը կը թնդայնեն: Ու աւելը կ'ըլլայ դրա՛խտ մը ուր՝ հուրինները միայն կը շնչեն կարծեո՛ւ:

X

Բարեկիրթ մայրերը՝ հենց մատաղ հասակին մէջ, պղտիկներն իրենց ծնողական լաւտին տակն առած՝ յաւէտ հեռի կը պահեն զանոնք փողոցի վտանգաւոր կեանքէն, ուր խեղդփնայով թերեւս մէկ մէկ շիտիտի հասնէին անոնք՝ տոռանց այդ կանխահոգ զգուշաւորութեան:

Այդ հնաւանդ ողորութեան համաձայն, նստիլ գացող ծնողներու փէշերէն շնորհուած կ'ըլլան շատ անգամ անմեղ գառնուկներ որոնք՝ իրենց մայրը Մարիամին նման կը վսեմացնեն անշուշտ:

Եւ արդարեւ, կեանքի դիմայեղումներուն մէջ, կրնա՞ք գտնել պատկեր մը աւելի՛ վսեմ, աւելի՛ աստուածային, քան պատկերը այն պարկեշտասուն մայրիկին՝ որուն քղտնց թին փարած են զոյգ մը անզուգական հրեշտակներ, ու հա՛տ մըն ալ փակած է անոր ալպատրէ կուրծքին, ուրկէ կեանքի անուշիկ նեկաւորը կը ծծէ ա՛ն կո՛ւլ կո՛ւլ:

X

Մելիքենց Երուանդը, չորս տարեկան տղեկ մը, մայրիկին հետ նստիլ գացեր էր դրացիի մը տաններեսը, ուր առաջուց եկող ուրիշ ընտանիքներու պարլիկներ ալ կային, որոնց հետ, ծնողքին անմիջական հսկողութեանը տակ, Երուանդ կը սկսի խաղալ:

Բնագղումի ժառանգական բերումովը, աղջնակները ընդհանրապէս պուպրիկի, քրոցքի, հիւլենի, մատնոցի եւայլն սիրահար կ'ըլլան, իսկ տղաքները՝ հոլի, գնտակի, վէզի, սոյլի, միքի եւայլն ետեւէ կ'իյնան: Երբեմն այս խաղալիկները իրարու հետ կը փոխեն, ուրկէ աննպատակ գծաութիւններ կը ծագին վայրկեան մը վերջը մոռցուելու թէութեամբ սակայն:

Երուանդ, ընկերուհոյ մը հետ խաղցած ատեն, փոխաբէնը բան մը տալով, անոր մատնոցը կ'առնէ: Վրոյէն քիչ մը ժամանակ անցնելէն վերջ, աղջիկը ետ կ'ուզէ զայն: Մանչը կը մերժէ: Իրարու ձեռքէ խլել կ'ելլուն: Ու... Երուանդ կ'ուլ կուտայ մատնոյը:

X

Վայրկենապէս Երուանդ գունատած ու փոխուած էր: Մանուկը կը տառապէր, որովհետեւ մատնոցը որկորէն վար գացած չէր: Ահաբեկ մայրիկը խելք կ'ընէ տղայ մը խանութ զրկելու: Բժշիկ մը ներկայութիւնը անմիջական կ'ըլլայ: Սակայն Իպոկրատի այդ անփորձ աշակերտը՝ գործիքով բերանը խառնշտկած պահուն, մատնոցին ճետքը կորսնցնելով՝ փորն իջաւ կ'ըսէ ու կը մեկնի:

Ամիսները կը սահին կ'երթան. բայց Երուանդ կը տառապէ՛ր տակաւին: Ձայնը՝ փոխուած ու ականջները՝ ծանրացած էին: Բժիշկ միացած չէր որ ձեռք չգարնէր: Աղքատի մը կամ գձձի հարուստի մը զուակը ի՞նչ որ ըլլար՝ թերեւս դարմանումի կտմ խնամքի պակասին վերագրուէր խեղճ աղուն տխուր վիճակը:

Ատո՛նկ չէր սակայն: Մելիքենց դրամ չէին խնայեր. երբեք, Ուխտատեղիներու սուրբերուն ոտքը դիմելու խոհեմութիւնն ալ չմոռցան ասոնք:

Երկար տարիներ անցան, եւ Երուանդ թէեւ մեծցաւ ու զօրացաւ, սակայն քիթն ու ականջը փնտրուած էին: Թալառի համբաւուր Տոքթ. Տատին ալ կ'երթայ, որ վաղիական ակտ է ըսելով՝ յուսարե՛կ ետ կը դարձնէ դժբա՛ղդ երիտասարդը:

X

Երկու ամիս առաջ, սովորականէն աւելի նեղուելով Երուանդ՝ կը դիմէ մեր Շիրինեան Տոքթ. Յարութիւն Էֆ.ին, որ՝ տղուն քիթը լաւ մը քննել վերջ, կը յայտարարէ թէ, հիւանդութիւնը սիֆիլիս չէ, եւ թէ՛ քիթն մէջ գտնուած աւելորդ ոսկորի մը ներկայութիւնը այդ անպատեհութիւններն առաջ բերած ըլլալուն՝ գործողութիւն մը կարելոր է, ուրկէ ետքը, բուժումը՝ անվերիպելի պիտի ըլլայ:

Գործողութեան խրատելակը կ'ահաբեկէ՛ տղան:

Վերջերս Այնթապի Տոքթ. Շէքրադ Հոսեկաւ: Շատ մը կարեւոր գործողութիւններ կատարեց: Չորս հարիւր հիւանդներ իր դանակին տակէն ոտքի ելաւ... փրկուած: Անմահի մը համբաւը չինեց իր անունին չուրջ այս Ամերիկացի նսկիլուպը, որուն դիմելու կը փութայ նաեւ ծաղկատի Երուանդ: Տոքթորը՝ գործողութեան մը անհրաժեշտութիւնը կը շեշտէ: Երուանդ, ճարահատ, կը համակերպի՝ ա՛լ:

Գործողութիւնը տեղի կ'ունենայ... 1905 Օգոստ. 3ին:

Ու... ԲՍԱՆԸ Մէկ տարի առաջ Երուանդի բերնին մէջ կորսուած մատնոցը՝ քիթն մէջէն կը գտնուի՝

Երուանդ փրկուած է հիմակ:

ՄԻՀՐԱՆ ԻՍՊԻՐԵԱՆ

ՄՐՏԱԿՑԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Ազնիւ ընկերուհիս

Օր. Թագուհի,

Դրեւ չեմ ուզեր ալ. մատներս ձանձրացան գրիչ բռնելէ, եւ միտքս ալ յոգնեցաւ. մեղամոզձուտութիւն մը կայ վրաս, ձմեռուան լացող շունչերուն պէս լուռ մեղամոզձուտութիւն մը:

Ամէն մարդ, ամէն զգայուն արարած երկու ասոյ բան կրնայ գրել երբ գրասեղանին դէմը անցնի բան մը գրելու դիտաւորութիւնով, արդ պիտի մակաբերես թէ, արդեօք անգագ՝ ըլլալուս համար է որ չեմ կրնար գրել: Երբէք: Ինչպէս վերը ըսի, միտքս յոգնած է, մատներս ձանձրացած, եւ ամբողջ էութիւնս ալ հիմնովին տկար: Գիտեմ թէ կը ցաւիս ասոր համար, բայց իրողութիւն մը երբէք չկրնար ուրացուիլ:

Տխո՛ւր խոստովանութիւն:

Որքան դժուար է ինձ այսպէս խօսիլ եւ որքան ալ նողկալի, իմ մասին կ'ըսեմ, իմ մասին, մի՛ ցուիր:

Կը յիշե՞ս նախկինը, կը ճանչնա՞ս զայն երբ հիմա տեսնես: Անշուշտ, ո՛չ: Անցեալները բարեբաղդութիւնը ունեցայ քեզի հետ վերջին անգամ մը տեսնուելուս. ըսիր ինձ թէ Պ... գիւղը պիտի երթաս ամառը հոն անցընելու, եւ քիչ մը կ'ազդուրուելու համար:

Վաղանցիկ տկարութիւն մը այդ գիւղին օդերովը կ'անցնի, կը բուժուի, ուրախ էի առ այս, բայց քիչ մըն ալ տխուր, տեսութենէդ բաւական ժամանակ զրկուելուս համար:

Ստիպեցիր զիս՝ գալ տեսնել քեզ նաւամատոյցին գլուխը, իրիկնամուտի զովութիւնով թեւ թեւի պտըտիլ, ժուռ գալ քանի մը վայրկեան ծովուն ափունքն ի վեր: Այդ վայրկեանին զգացած ուրախութիւնս ու յուզմունքս կրնա՞յ պատմել արդեօք մոլորած գրիչս եւ զգայնութենէ թմրած սիրտըս: Գիտէիր որ միջոցը չէր ներեր ինձ գալ գտնել, տեսնել քեզ... եւ մեր կոյս սրտերուն յոյզերն ու փոթորիկները փարատել իրարմով:

Ա՛հ, չէի՞ր գիտեր որ տունը մնալու ստիպուած էի, մօրս օգնելու եւ... եւ քիչ մը ալ հանգիստ ընելու համար: Վերջապէս անգուժ... միջոցը... մեծ ազդեցութիւն ըրաւ իմ վրաս այս առթիւ:


Ուրախ եմ որ քու նամակիդ մէջ բոլորովին ապաքինելդ գրած ես: Ինչո՞ւ իմ վիճակս կը հարցնես, իմ որպիսութիւնս կ'որոնես, արդեօք չե՞ս զգար թէ իմ տկարութիւնս օրէ օր սաստկութեան կը հետամտի, ինչպէս ես նախազգացի քու ապաքինելդ՝ նամակդ առնելէ գրեթէ օր մը առաջ: — Չեմ գիտեր թէ՛ միջոցի... պակասութեամբ ընկճուած երիտասարդ մը իր նեղ պարագաներուն երբ անանց եւ անբուժելի վերքով մը վիրաւորուի՝ ի՞նչ կ'ըլլայ անոր վիճակը, — վսեմ բարկութեամբ ու վեհ խոկումով մը կը մոլեգնի, եւ կը բարդուի, կը կրկնապատկուի վերջապէս անոր տկարութիւնը անտարակոյս:

Բայց...

Չմեռնամուտը մօտ է: Կարծեմ ձմեռը Բերս պիտի անցընես, այն ատեն կը տեսակցինք: Դրած ես թէ՛ — եկո՛ւր —, երբ դու գաս զիս տեսնելու, լաւագոյնն է: Բայց, մինչեւ որ գիւղէն իջնաս, քանի մը նամակներդ կը ստանամ անշուշտ:

Ընկերուհիդ

ՄԱՐԲՐՈՒՅԻ



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՁԵԿՈՅՑ

«Հանրագիտակ» այս քիւռն սխեւայ կը սպորի՝


Կ. ՊՈԼԻՍ ՊԱՊԸ ԱԼԻ ԶԱՏՏԵՍԻ

Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ ԹԻԻ 52

Այս առթիւ կը խնդրենք մեր թըղթակիցներէն և բաժանորդներէն որպէս զի հաճին իրենց նամակները ուղարկել վերոյիշեալ հասցէին:

Թերթիս տնօրէնութիւնը միշտ նախանձախնդիր իր գրական գործին զոր կը վարէ հինգ տարիէ ի վեր անընդհատ, պատիւ ունի զեկուցանել արգոյ ընթերցողներուն և բաժանորդներուն թէ, Հանգէսին բովանդակութիւնը նորանոր զոհողութիւններով բարեփոխուած ըլլալով, ՀԱՆՐԱԳԻՏԱԿ պիտի կրնայ գոհացում առաւ ամէնէն դժուարահաճ ընթերցողներուն իսկ:

ՄԱՅՐՆ ՈՒ ՄԱՂԱՋԻԿԸ



- Եռունն երկու սարիք ունիմ, մայրիկ, ալ զիս չե՞ս կարգեր...
Որ ունենամ ամուսին մը. ըսպասուի՞ն ու կտո՞ւն... :
- = Պարսփս գիտեմ անուշ աղջիկ, մի կարծար քե չեմ գիտեր,
Բայց կուգեմ որ առած փեսաս ... քիչ մը ըլլայ ինչքի տեր :
- Ինչքն ի՞նչ ընեմ, խնդրեմ մայրիկ, ինձ պէտք եղածը ան չե՞.
Շալըդ զիսուդ, քեզ դուրս ելիր, դեմքդ ելլողը կանչե՛ :
- = Համբարուքի՛ն, հոգիս աղջիկ, սարիքդ դեռ պիտիսիկ,
Պէտք է մօրկանդ քեւերուն տակ պահ մը ընես դեռ քիսիկ :
- Եռունն երկու սարիս հասայ, փստեցաւ ալ բարձ միւստի,
Երբ կարող չես զիս կարգել, ձգե՛ գտնամ ես իմ տեր :
- = Մի խոստիր աղո՛ւր աղջիկ, չեմ կրնար միտք քերել տա,
Վերջը կըլլայ որ կը գոչաս ու կը գտնես բոլ պէշտդ :
- Կը նախընտրեմ քեւ տալ մեկուն, դիմս անցնել սեւ վիւր,
Նոյն իսկ երբ այդ մարդն ըլլայ՝ ծախող լիկիւս գեղ. վիւր :
- = Բայց նոնոյս, չե՞ս մտածեր... պէտք է փնտռել արժանիք,
Վերջէն դժբաղդ կըլլաս եւ քե՛ դու կը շինես յար ժանիք... :
- Ժանիք շինեմ, դժբաղդ ըլլամ միտքս դի « տա տա ե » ն :
Երբ պատուար ըլլաս նորէն, քեզ կը կոչեն « sa: sin » :
- = Անանկ է նե քիկոյդ աղջիկ, ըսե՛ չունիմ ես հար մար » :
Այս օրուրնե գնայ զտիր երիկ մարդ մը քեզ յարմար :
- Ես գտած եմ տղեկ մը որ երկու աչքը կոյր, յամր է,
Միմիայն դու իբր ծնողք, փարսները քեզ համրէ :
- = Ի՞նչ հարկ այժմեկն ձեր հարսնիքին իմ կողմանես վճարել,
Երբ կոյր համր երիկ կ'առնես կրնաս վերջէն... փող ճարել :

Վ. Փ.



ԱՐՈՒԵՍՏԱՍԵՐԻ ՄԸ

ՅՈՒԾԵՐԸ

(Շարունակութիւն)

Դժբաղդութիւն մը չէր ինծի համար զինքը կորսնցնելու: Ասոր հետ մէկտեղ սակայն, անոր մեռնելովը սիրտիս մէջ պարապութիւն մը կ'զգայի՝ զոր յետոյ, մինչեւ այսօր բան մը չը կրցաւ լեցնել: Ես այդ աղջկոր չէի սիրեր, անոր նկատումով զգայնական ո՛ր եւ է տաք վերաբերութիւն մը չունէի: Եւ արդէն ի՞նչ էր եղած որ. մեր մանկութիւնը միասին էր անցած մինչեւ չափահասութիւն՝ ուր անոր կեանքին սեւաթոյր վերջակէտը կը դնէր Սնըմբունիին: Այս լեզի իրականութեան մէջ ես ի՞նչ յանցանք կրնայի ունենալ. ես չէի գիտեր նոյն իսկ թէ՛ ի՞նչ է կին մը սիրելը. այդ զգացումէն սիրտս զուրկ էր եւ այնպէս է այսօր ալ: Ես ի՞նչ ըրած էի, ի՞նչպէս տեղ տուած էի իր սէրին, ինք սիրած էր. ահա՛ այսչափ. իր հոգեկան մէկ տկարութիւնն էր աս, որուն պատասխանատուն ես չէի կրնար ըլլալ անտարակոյս: Իմ հոգեկան շատ մը անծանօթ վիճակներուս, ներքին անբացատրելի յոյզերուս վրայ միշտ խօսած էի իրեն, բայց օր մը, օր մը արտասանած չունէի մէկ վա՛նկ իսկ այդ մասին: Մտառը, անխառն հոգիիս վրայէն կեղծիքի ցուրտ շունչ մը անցած չէր: Ու աւելի վերջերը, ինք խիստ լաւ գիտէր թէ ես Արուեստին սէրովը տոգորուած հէզ, մտամոհմի տղայ մըն էի, թէ անկէ զատ բան մը չէի ու չէի կրնար ալ խորհիլ ու զգալ: Երկու տարիի բովանդակ հեռակայութիւնս իրմէն՝ այս չէ՛ր ապացուցաներ եւեթ ու յաւէտ: Օ՛հ, չէ՛, ես յանցապարտ չէի, հեղինակ չէի կրնար նկատուիլ այս գերեզմանական վախճանին: Զակատագրին ամենահզօր անյեղիութեան դէմ՝ ապիկար մարդը սպանդ մըն է անկամ ու անճար:

Ինծի ի՞նչ էր ըսած ան. «Օր մը՝ դո՛ւն ալ պիտի սիրես». այդ խօսքը ինծի համար զուրկ էր ճշմարտութիւն ըլլալէ: Ես որ այդ

զգացումը չէի ունեցած այն հասակիս մէջ՝ որ արբունք կը կոչուի, եւ որ մարդուն կեանքին ամենէն յուզմունքոտ, ամենէն կրակոտ շրջա՛նն է, ի՞նչպէս կարելի պիտի ըլլար ինձ սիրել այդ տարիքիս խաղաղ ու աննդորաւէտ անցքէն յետոյ, երբ մանաւա՛նդ իր ողբերգական ու տաժանելի մահը՝ կուգար անթափանց ու կուռ վարագոյրը քաշել սիրտիս եւ կիներուն մէջտեղ:

Սիրո՛ւն, չա՛տ սիրուն ընկերուհի մը ունենալ կը փափաքէր. չէ՛. Գեղարուե՛ստ, Գեղարուե՛ստ, ահա՛ կեանքիս ընկերն ալ՝ ընկերուհին ալ, աղկէ դուրս ո՛չ մէկը պիտի սիրէի, ո՛չ մէկը պիտի ճանչնայի. եթէ հարկ ըլլար՝ ամէ՛ն բան պիտի մոռնայի անոր համար, պիտի դրժէի, ռւբանայի պիտի՝ նոյն իսկ եթէ Սատուածս ըլլար:

Արուեստագէտին համար միայն Արուե՛ստ տը կայ. անկէ զատ ոչինչ գոյութիւն ունի անոր սիրտին եւ աչքին դէմ. ընտանիք, ծնող, բարեկամ, սիրուհի, կրօն, աշխարհային ամէն ենթադրական հրապոյր, ամէն, ամէ՛ն բան անարժէք են ու անկարեւոր իրեն համար. ա՛ն՝ Արուեստը կը ճանչնայ եւեթ, ու այդպէս ըլլալու է արդէն:

Երբ Արուեստէն զատ ուրիշ բան մը կը մտածէ արուեստագէտը, երբ իր խորհելու եւ զգալու ոյժերէն մաս մը ուրիշ մէկին վրայ կը կեդրոնացնէ՝ այն մտեն անոր համար չկայ մեծաքայլ տաաջգիմութիւն, սրով իրական յաջողութիւն իր ապարէզին մէջ: Ան ա՛յնքան պէտք ունի խելքի եւ սիրտի՝ որքան չունի գիտունը եւ զրազէտը, ու վաճառականն: Անոր համար ազգական գոյութիւն չունի, ան Մարդկութիւնը կը ճանչնայ միայն եւ անոր բարոյացումին ու դատարարակութեանը համար կը տքնի:

Իր կեանքը, — աշխատանքի եւ յուզմունքի տնընդհատ ու անվախճան շրջան մը — զո՛հ կը տանի անոր ազնուացումին ու բարձրացումին համար. հաճոյքով կ'սպաննէ իր մէջ ետը ու ցկարագիրը, սիրով կը մերժէ մարդկային ամէն հնարաւոր ըզճանք ու զրօսանք: Իր դերը մեծագոյն է Մարդկութեան մէջ, վսեմ է, համբուրելի՛ է:

Միակ անձնագո՛հն է՝ մարդկային դաստիարակութեան Պզտիկներուն համար վար-

ժարանը՝ մեծերուն համար թատրոնը, առաջինին կրթութեանը համար՝ վարժապետ, երկրորդին համար՝ դերասան։ Թատերախաղի մը ներկայացումը հազար վարդապետական քարոզ եւ բարոյականի թիւր հատոր կ'արժէ։

Տառապանքի որդեգիրն է դերասանը։

Ահա՛ ճշդորոշ եւ իրական երանգները՝ Արուեստին ու Արուեստագէտին։

Եւ ահաւասիկ թէ ինչպէս կը հասկնայի Արուեստագէտը եւ թէ ինչպէս կ'ըմբռնէի Արուեստը։ Այս էր ուզիս՝ ուրկէ պիտի քաշէի։

Ուսուցչապետին վարժարանին մէջ էի այն ատեն։ Հոս չեմ ուզեր կորսնցնել առիթը՝ յայտնելու համար ակնածանքս եւ ձօնելու երախտագիտութիւնս այն Մեծ Մարգուն, Պէրպլեանին, որ մասնաւոր հոգածութիւն մը ունէր իմ դաստիարակութեանս մասին։ Օ՛հ, ես շատ վշտացուցած եմ այդ ազնիւ ու ճշմարիտ Դաստիարակը. ասիկա ցաւ մըն է ինծի համար այսօր։

Այդ միջոցին էր որ Մնակեան դերասանապետը թերթերու միջոցով կոչում կ'ընէր զեղարուեստաւէր երիտասարդութեան, որ պիտի երթային իր հոգանիին տակ սովորելու դերասանական արուեստը՝ «գործնական ու տեսական կերպով» միանգամայն։

Այս օրին պէս կը յիշեմ. հինգշաբթի առաւօտ մըն էր, երբ ընկերներէս մին դըպրոցին մէջ ցուցուց ինծի Բիւզովցիին մը՝ ուր այդ թատրոնական հրաւէրը կար տըպուած։ Ծիւղ առիթն էր. լաւ չէր ըլլար յապաղիլ։ Կէս օրէն յետոյ մարմնամարզի փորձ ունէինք, կրնայի թողուլ ու երթալ առանց նշմարուելու։ Եւ խոստովանութիւնս անկեղծ ըլլալու համար պէտք է աւելցնեմ հոս որ՝ ինչ դաս ալ ըլլար, նոյն իսկ Տնօրէնին դասը, պիտի թողէի ու երթայի։

Կէս օրէն յետոյ գացի գտայ Մնակեանը իր տունին մէջ։

Յիշեցուցի իր հրաւէրը եւ խօսեցայ դերասանութեան տենջիս մասին։ Ըսի թէ պատրաստ էի դերասան ըլլալու՝ եթէ ուզէ ընդունիլ զիս։

— Տղա՛ս, ինչո՞ւ չընդունիմ, խօսեցաւ ան, ահա՛ մենք ծերացանք ալ, պէտք է մեր

յաջորդները ունենանք, ու ասոր համար պիտի աշխատիմ։ Գալով քեզի, դուն մարմնական ամէն առաւելութիւն ունիս. աչքերդ գեղեցիկ են, հասակդ յարմար է, ձայնդ լաւ է, մարմնովդ աւելի հնչուն կ'ըլլայ։ Հիմա քեզի կը մնայ փորձել արուեստը. եթէ մարմնականին հետ բեմական յատկութիւն ալ ունենաս՝ յաջողակ դերասան մը կրնաս ըլլալ։

Ու խօսեցաւ ինծի այդ ասպարէզին տառապանքներուն վրայ՝ յորդորելով որ հրաժարիմ այս ասպարէզէն։

— Ես ատենք ըտլուն ալ գիտեմ, ըսի Մնակեանին, թերեւս սխալ մը գործեցիք՝ ինծի այդ անգոհացուցիչ վիճակները պարզելով։ Ես տակաւին դպրոցական եմ. մի՛ կարծէք որ անգործ ըլլալուս համար է որ դերասան կ'ըլլամ, կամ տղայական փափաքի մը անսալով է որ հոս կուգամ. ո՛չ. եթէ դուք չէք ուզեր զիս ընդունիլ՝ ատոր ո՛չ ոք կըրնայ առարկութիւն մը ընել. ազատ էք ըսելու ինչ որ կ'ուզէք. զիս ընդունիք կամ ո՛չ՝ ես օր մը դերասան պիտի ըլլամ դարձեալ։

Քանի մը ժամ խօսեցանք արուեստին վրայ, ու մեկնեցայ անկէ յետոյ միշտ թաւորոն երթալու հրաւէր ստանալով։

Դերասանութեան ընդունուած էի։

Ներքին անբացատրելի հրճուանք մը կը զգայի։ Կարծես մեծ դերասան մըն էի եղած։

Ալ Մնակեանի ամէն ներկայացումներուն բեմէն կամ բառփեռէն կը հետեւէի դերասաններուն արուեստական ընթացքին։

(Յաջորդ թիւով)

ԱՇՈՏ ՄԱՏԱԹԵԱՆՅ

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Ա.սարգսար. — Գործակալութիւն. — Ստացանք մէկ Օսմ. ոսկի, մնացեալին կը սպասենք անպատճառ։

Պանսրմա. — Թ. Զ. է. ֆ. — Նոր բաժանորդները արձանագրեցինք եւ միայն 27 Ղրչ. ստացանք. էմանէթէին դրամ չի յանձնեց մեզ։

Կը խնդրենք մեր Պատ. բաժանորդներէն ընդհուպ հասցնել մեզ իրենց պարտքը։

ՍԱՐԸԵԱՐԻ ԳԻՒՂԱԴԱՐՁԸ

Կամուրջէն վերին Վոսփոյ մեկնող վերջին շողեակն մէջ, երկրորդ կարգի տոմասակները ձեռքերնին, փոստած օդափոխաններ շտապաւ ներս կը մտնեն ու ցուկին կողմը խցիկին մէկ անկիւնը կը կծկուին, մինչ անձրեւէն խիստ հագուստներնին պատանքի պէս մարմիննին կը թրջէ:

— Պէտք ա՛յար, Փրկիչցուն պուշնուզու չըլա՞ր եա... ծօ՛ կիւղէլիմ գեղերնիս, տու, ներնիս, պուճախնիս ձգենք տէ աս հաժարին եաղը՛րս...

— Սո՛ւ... եարաս մի՛ ճանկոտեր խորիկ աղա, վար իշնալը աչքէս թիւթմիւշ կ'ըլլայ կոր ամա, տեղէս միտալ մը չեմ կըրնար կոր խախտի...:

— Թու՛թ քէհատընը պէրապէր կիտէլիմ... ամառը թիւթի պէս գացի՞նք ամա հիմաճուկ տէմիրի պէս կեցեր ենք... իշնամ պիտի, իշնամ պիտի՞ ամա... օրասընը սօռմա...

— Ծօ ախպա՛ր, ի՞նչ տեղը կար քի տասը քսան ոսկի մասրաֆ ընէի:

— Տը... տը... տը... տը... տը՛... կռնակս ի վար կ'իշնայ կոր. անձրեւը ճիւղէրս անցաւ... կէօյամ հաժար թէպալիլի կացեր ենք... վոյ պաշըմա՛...

— Էկէր հիւընտութիւն մըն ալ ես չի հանեմ նէ շատ բան. տունը ըսես նէ շունի եաժուրի պէս ցուրտէն թիւթերնին տնկուեր է տէ կէնէ նստինք կ'ըսեն կոր քօտաշները:

— Նա՛, ես աս իրինկուն բուրդ եօղան կը տանիմ կոր քի նազենիմները չի փատնան տէյի, չիւնքի ծարը կ'ենէ ինծի պիտի գպչի...:

— Պէ պա՛պամ, պիտի իշնամ, պիտի իշնամ ամա՞ պիր միւնքիւն չորս ոտքս մէկ չեմ կընար կոր բերեր...:

— Գուզո՛ւմ խորիկ աղա, հայտէ ես ազկանս ուղուրին աս պաշը տըշարը մասրաֆը ըրի, տո՛ւն ինչ ունէիր...:

— Քառա պսակ կէչէյիտի պաշըմըզտան, մեր սօմուն քըռանին եէլը սէպէպ եղաւ իշաէ, նէ՞ պիլէիմ ախպար, հէքիմէրին մօ-

տասը... կէօյամ քի ձըռըռին ճուրը խմէնէ կ'ըռնտնայ եղեր, մենք ալ կատուի պէս իրիլի ուֆաղը խածինք առինք եկանք քի կէօյամ շիֆա ըլլայ տէյի...:

— Իմին մեղքս ալ մենծ աղջիկս էր, նը, չանը ետ ըլլալուն կիպի, վառն սընըր հիւլէթիի պէս պան մը եկաւ, երկու օրուան մէջը եկանք տունը պոնեցինք, սալլաթի եկանք եէռլէշմիշ եղանք, մէյէր բօստալոս հիւլէ պիր չէյ եօրմըշ. հիւլէթ պիլիմ քէսէտէ իմի՞շ քի տահա հալէ պաշ ոլամաւաւմ...:

— Ծօ ախպար, բերնիս ջուրերը կը վազէ կոր, ան ուշ վախիթ չէնք շնորհք մօտիկ մը տուներնին գացողները չե՞մ տեսնար կոր... մուխ մըն է թէփէյէս կ'ելլայ կոր:

— Պէ պապամ, կը խախտիմ կոր ալ, մարդ չի մնաց վար ինջան, ինծի կը հարցունեն կո՞ր նէ, տունը հիւանդ կայ, կ'ըսեմ կոր, ի՞նչ խալթ ուտեմ...:

Ու նմանօրինակ տրտունջներով կը հասնին Սառըեար, ուր կրկին անձրեւին տակ խիստմ տուն կը հասնին, յաջորդ առաւօտ տուն կրկին իրենց գործին իջնալու համար: Այս կարգի ընտանիքի տէր հայրեր խըղձալի են արդարեւ, որոնք ստիպուած ըլլալով տեղի տալ ընտանեկան վըրտութենքուն, ամէն տարի իրենց պիւտճէին վրայ տասը քսան ոսկի բացառիկ ծախք մը կը բարդեն ակամայ: Ասոնք թէեւ ուրախութեամբ կամ տխրութեամբ գիւղերը կը ցրուին, բայց վերջէն դառնալու համար նիւթական հազար դժուարութեանց կը հանդիպին, քիթէ բերնէ գալու ուստիճան գղջալով:

×

Մօտէն ուսումնասիրելու համար այս իսկական նիւթը՝ հոս պիտի հետեւինք խորիկ աղային, որուն ընտանեկան ներքին կեանքը պիտի կրնայ համոզիչ ստոյգ գաղափարը տալ այս մասին:

Շողեակէն ելլելուն խորիկ աղա, ահագին ծրար մը բեռնակիրին տուած, անձրեւին տակ ցուրտէն դողալով տուն կը հասնի:

եկնի Մահալէի բարձունքը փայտաշէն ընակարան մը, որուն գոց վարագոյրներուն ետին չորս հինգ շուքեր կը տատանին :

Ոտքի ձայնը առնելուն առանց սպասե-
լու որ խորիկ աղա վանգակը քաշէ՝ բոլորը
մէկ դուռը բանալով կը դիմուորեն :

— Վո՛ւյ... մարդ տօնմիշ կ'ըլլայ կոր
խորիկ աղա. սա ի՞նչ հավա է...

— Վաղը բաթլիճան տօլմասի մը տրէ՞ս
տէ ջուրերը երթանք... չը՛լար...

— Էյ ամա՛ն խորիկ աղա կէնէ վարօտին
մէջ նստեր ես ալահալէմ... աս պօխճա՞ն
ինչ է... վախնամ եօռղան բերեր ես...

— Վաղը իրինկուն ալ սօպա պիտի խուռ-
միշ ընենք... անանկ կ'երեւայ կոր, ըսելով
մէկ կողմէն կը հանուի ու գիշերնոցը կը
հագնի :

Օրիորդներէն երկուքը մէկ բերան,

— Ալ վար չպի՛տի ինջնանք մայրիկ, կը
խախնէ կոր պատուհանը նստելու, մարդ չի
մնաց գիւղը մենէ վատ...

— Սղջի՛կ, ան պայազի մարդիկն են քի
չապուճախ կծիկը կը դնեն, քիպարութիքը
ան է քի էն ետքը իշնանք...

— Խէլքի՛դ եկաւ խորիկ աղա, կ'ըսէ
տիկին Մէնաուֆ՝ որ նոյն ատեն սեղանը կը
շտկէր ճաշի համար, աս օր մինչեւ իրինկուն
չան լակոտի պէս տողացինք :

— Ատոր խօսյոյը կար, թող պախաղէն
կարմիր պիպէն բերել տայիք հառտալա մը
չինէիք ուտէիք, ներսդիւնիդ խըզտըրմիշ
կ'ընէր...

— Աման տուն ալ խորիկ աղա, քեզի
ճուղապ տալու սիրտ չունիմ, հա՛յտեցիք
կերակուր ուտենք տէ ետքէն քեզի խօրա-
թելիք ունիմ, ըսելով բոլորը մէկ կ'անցնին
կը նստին սեղան, ուրկէ վերջ օրիորդները
մօրերնուն մէկ աչքին վրայ՝ իրենց սնեակը
կը քաշուին, ո՛ր գիտէ, ամբան եղանակին
վարած զբօսանքնին վերջիւնէլ :

Երբ աղա տուտու առանձին մնացին,
տիկինը խօսք առնելով.

— Կետինին տակը կ'անսիմ կոր ալթըխ,
աս տահա պիտի նստի՞նք խորիկ աղա, հիշ
չես մտմտար կոր, աղջիկները ըսես նէ ճեր-
մակ ֆիտտաններով կը ֆատնան կոր...

— Կնի՛կ, աղէկ կ'ըսես կոր ամա, աս

օր կ'երթանք կոր ըսենք նէ տասը տասեր-
կու ոսկիի կը նայի, ես ըսես նէ վարօտիս
պիլիթը առնելէս ետքը թամ տասերկու զը-
րուշ մնաց ելէկիս ճէպը...

— Էյ սօղա՞յ...

— Սօղա՞յ... հի՛շ, ի՞նչ պիտի ըլլայ,
ասօր եօռղանները բերինք, վաղն ալ զօպան
խուռմիշ կ'ընենք, կ'ըլլայ կ'երթայ...

— Էյ ծուռը կլիտ՛ւ... քա՛ իմացո՞ղը
ի՛նչ կ'ըսէ...

— Հի՛շ, ի՞նչ պիտի ըսէ, կէօյամ քի հա-
վան աղէկ է եկեր տէ նստեր ենք...

— Էյ մ'ըսե՛ր, խորի՛կ, հիմա մարելիք
կ'իյնայ սիրտս...

Քու սիրտդ մարելիք իյնալուն, իմ
քէսէս երկու երեք ոսկի իյնալու է քի ու-
զածդ ըլլայ... պաշխա թիւղիւ ճարը չի-
կայ կնիկ...

— Քա ճանճմ օճ պիլէզիկս առիր ըսէ-
հինի տրիւնէ ի՞նչ եղաւ ան փարաները,
հինգ ոսկի վերցուցի ըսիր, ան վախտը...

— Խելքի՛դ եկաւ կնիկ, հինգ ոսկի մի-
նակ էլէկներուն իլէն ջուրերը կերած ճէվիդ
իչիներնուդ փարան է, սանքի Պանք Օթօ-
մա՞նը ցուցուցիր մասրաֆին խառըլըխ, եէ-
տիյի նանէեէ պագ...

— Եաղմա չիգայ, խորի՛կ աղա, քնա-
ցող կնիկներէն չեմ... աշկը բաց, ես գի-
տեմ քանի խուռուշ մասրաֆ եղաւ նէ...

— Հայտէ կազը բուֆ ըրէ՞ տէ ետթա-
խըդ մտիւր, վրաս կէշութին կուգայ կոր
կնիկ, խելքդ տուն չըներ նէ պարէ ծանդ
կորէ...

— Ավագս հասած տեղը պիտի պօռամ
ի՞նչ եղաւ օճ պիլէզիկիս խառըլըխ վերու-
ցած հինգ ոսկիները...

— Օձերը ուտեն կլիսդ, շանը ձգնածը,
տիպերնիդ շա՞պ խօթեցին քի ելաք քօքօռ
քօքօռ Սառընարները եազլըխ երթաք տէյի
... հէ՞... փոխեր եմ հինգ ոսկիիդ մէջը,
թրախօմա չառի քի թէփէյիս վրայ թօրուզ
չըլլաս տէյի, կէնէ սեւ բաղդէս դէմա ելար :

— Եուճուճախներուն պերանը երթաս
տէ օրթնոտի պէյիդ քի ատանկ տէլմէ սաչ-
մա միտքերու կ'երթաս կոր, ես չէի տիո՞ր
սօնը չէմ ուզեր, չեմ առներս պօռացողը,
տէ տուն կէնէ սիւլիւկի պէս ետեւս փակար :

— Սիւզիւլմիշ ըլլաս տէ թօռթութ սօղ-
լուճաններուն կեր ըլլայ հէմէն, բօստալ մը
պըռէքիմ... աս չէ՞ էյլիկդ քի էլ ալէմին ը-
ռէզիլ եղայ տէ կէօշ չեմ կրնար կոր ըներ :

— Հասկցայ միտքդ... մախսուս կ'ընես
կոր քի օսկի ճուր կերտանըլսա ալ ճալա-
կողտես տէ տանիս մայմուն չինես, անկէ
ալ թէքմիլ եազլըխին մասրաֆը ինէ ելայ

տէյի... հա... եաղմա եօգ, առջի սէրսէմ
թափախը չեմ հիմա...

— Ես խելացի խռոզ եղեր եմ տէ ի՞նչ
ֆայտա կը տեսնամ կոր... ճիտիդ փակչի
կերտանընդ ալ բանդ ալ...

— Ես անիկայ Ուսկուիցայիս ըռգակ տէյի
պահեր տէ առջին մում կը վառեմ կոր...
էօրիւմ Ալլահըն էմրի խուժիէն տուրս պիլէ
չեմ հաներ...

— Էյ րէք աղէկ, նասըլ ընենք նէ զուր-
ցէ տէ անոր կէօրէ մամտանք. սա ասանկ
չան պէս բէնճիրէին ետին չպիտի տողա՞նք
եա...:

— Ա՛խ... պերանս կէչ կը զուրցէ ամա
սիրտս կէնէ պաշխա թիւուիւ է: Զըսեմ,
չընեմ, կըսեմ կէնէ պիր միւնքիւն չեմ
կրնար...

— Հա՛ չէօլէ, տինկօզուլի՞նք ի՞նչ է...
սանկ անուշ անուշ խօրաթուինք նէ չըլլա՞ր:

— Զըլլայիր տէ ա՛նա չիլլայիր հէմէն...
եազմաճի Բարսեղը սրունէն արցունք լոցաւ
քի առնէ տէյի տէ, չառի, քեզի կապուե-
ցայ...

— Կապող տէրտէրին նալլէթ (կ'ըսէ կա-
մաց մը) նէ իսէ, աղէկ եա, խըսմէթդ ես
եմ եղեր...

— Խոմուիս տէ եօղանի ասեզի պար-
կուլին ըլլայ վուճուտդ հէմէն...

— Էյ կնի՛կ հերի՛ք... հերի՛ք... զէ-
րէ աֆախաներս կ'ելլայ կոր, սուր սըտե-
ղէն գեղ իշնալինս նայինք տէ քիւֆիւրին
խօյին հոն կը թամամցունենք:

— Ի՞նչ պիտի ըլլայ, րէք աղէկ, ան է
քի բարայոյ՞ ըլլալիք պան է տէ տուն ալ
չունիս նէ նաֆիլէ ի՞նչ պէյնս սուլաթմիշ
ընեմ...

— Պէ կնի՛կ, իշտէ խելք խելքի տանք
տէ տիւպառա մը խուռմիշ ընենք, աս գե-
ղէն իշնալը տիւզ պիշիմ ըլլալիք պան չէ,
արալ թարալ ի՞նչ ընենք նէ ան է...

— Էյ աղջիկնե՞րը... անո՞նք նասըլ
խանտըրմիշ պիտի ընենք, հէլէ օրթանճաս
խաֆ տաղիլին ճուր խմիւղ սոյն է, րիւթիւն
կ'ուզէ քի ըռարութալը ըլլայ ամէնական
պանը:

— Պէ ճանըմ անոնց լաֆը չըլլա՞ր եա՛
... մենք մեզի նայինք, հիմա կ'ըսեմ կոր
քի մէկ քանի պապէթ կրուինք պէլի պէլի-
րիդ...

— Քա կեցիր միտքս բան մը ինկաւ Խո-
րի՛կ աղա, սա ո՛ւր է գիտես օր մը Զըռ-
չըռն էլինք տէ ծառին տիպը տէլիսանը մը
նստեր էր:

— Է՛յ... կ'ըսէ Խորիկ աղան՝ աչքերը
խոշոր խոշոր բացած:

— Իշտէ սա տղան, լաֆը մէջերնիս՝
մենծիս րէք է հաւներ, զէրէ ճէվիզ իչին
կերած վախիթը աչիւր աչկին մէջէն չէր զա-
տեր կոր...

— Քա ինչո՞ւ տէրախապ խապար չի
տուիր քի իսկէմրին խաֆային փակցունէի
... եէտլի նանէյէ պագ...

— Իշտէ թէվէքէլի չէ քի օրթանճաս
կամթառը խապար չի տուի, չիւնքիւ թա-
պիլէթդ, խուլդ գիտեմ...

— Ծօ՛... սա նայէ՛, վայ պաճաղընս
քուստուղըմ... էյ սօղա...

— Մեղայ, ես խե՞նդ եմ քի քեզի խա-
պար տամ քի՝ տունին առջեւէն ալ անցաւ
տէյի...

— Է՛յ... փիսէ՛ նայինք... աղէկ
եազըլս եկեր ենք, փարայէն վաղ անցայ,
նամուսս ալ վրայ կնաց ըսել է քի...

— Նա՛, տեսա՞ր, տահա ելլայի քեզի
անխելքութին ընէի աէ ըսէի քի, օր մըն
ալ պախճային դուռը կէօրիւշմիւշ եղան տէ-
յի նէ աճապ ի՞նչ ծուռ պիտի պէրէի կըլ-
խուս... ամա՞ պէրէքեաթ վէրսին քի
թուլպերանութին չունիմ եօխա...

— Քա կնի՛կ, ի՞նչ կ'ըսես կոր... ի-
րա՞ ես մի սուտ ես...

— Շախան կա՞յ ասոր, ըսեմ քի մի՞սս
ուտես... հիմա իս մտիկ ըրէ, Խորի՛կ
աղա, ես ինչ ըսելու ըլլամ նէ բերտէ մի՛
քաշեր առջիս: Հիմաճուկ վաղը մենծս առ-
նեմ վար Սաամալ պիտի իշնամ, չիտակ
աղուն մաղազան հարցունեմ գտնամ, հոն
տայանմիշ պիտի ըլլամ, իմացածիս նայելով
տղուն հարը էլիինցի Փիլիկ աղա կ'ըսեն կոր,
սառաֆ է եղեր, իշտէ մէկ քարով երկու
խուշ պիտի ղարնեմ, հէմ հօրմէն փարայ
պիտի առնեմ հէմ ալ տղէն ճուղապ, իշալ-
լան իրիկուան գամ նէ ծոցս, գոգս լեցուն-
կեկ կուգամ տէ, քուկին ալ երեսդ ըռենկ
կը պերեմ... հէլէ լուսնայ ես գիտեմ ը-
նելիքս...

Մեր յաջորդ շարթուան նիւթը պիտի ըլ-
լայ շարունակութիւնը այս իրական պատ-
մութեան, որուն մէջ մեր ընթերցողները
պիտի գտնեն քրքջալիր պատկերը այն տե-
սակցութեան՝ ուր աղա Փիլիկ՝ Տարսաւիչ
տղուն հեա ի՞նչ տեսակ ընդունելութիւն մը
կ'ընեն, իր աղջիկը մէջտեղ ձգելով գիւ-
ղադարձի համար դրամ շորթող խելացի (°)
մօր մը հանդէպ:

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Ստոյգ աղբիւրէ կ'իմանանք թէ՛ Սամաթիաքնակ Տիկին մը՝ արժանիքէն աւելի հասակը բարձրացնելու մարմա- ջէն՝ 5 ու կէս սանթիմ բարձրութեամբ կօշիկներ գնելուն հետեւանք անցեալ օր տանը սեմին առջեւ փառաւոր երկրպագութեան մը ենթարկուեր է։ (Ինչ մը նուազ սիրենք թուալէթը և գործածենք պատշաճութեան վաւեր- քը Ծ. Խ.)։

— Երեսունը հինգ տարի Սկիւտոր և երեսուն և հինգ չաքաթ միայն Բերա բնակելով կրկին իր բունկալը դարձող միւսիւ մը կ'իմանանք թէ Բերայի ա- նունը պահելու համար ձմրան յատուկ սալաւանքով վառարան մը գնած է։

— Սկիւտարէն մեզ կը գրեն թէ՛ հասուկ աղջկան տէր մայր մը գիշերը երազին մէջ խրատուելով թէ իր հոգեհատորը ամուսնացնելու համար պէտք է ֆէյի պոլիտիկի կերպունէ աղջկանը, խեղճ աղջիկը այսօր միտէ ֆէ- սատիէն ծանրապէս կը տառապի եղբւր։

— Բերա՝ Սբլանտիտի յուցափեղ- կին զարդերէն չիք միւսիւ մը անցեալ օր, դէմի հայելիին մէջ պեխերը ու- րելուն հետեւանք փառաւոր չախ մը կերած է ընտանիքի հօր մը կողմէ։

— Էրթալօֆօսի Տնօրէնէն կը տեղեկանանք թէ վարժարաններու վերա- բացումէն ի վեր յօխումի ու խորապիտի առեւտուրը 80 առ հարիւր նուազ է եղած։ (Ու տակաւին կ'ըսենք թէ վարժապետները դրամ չունին հէ... Ծ. Խ.)։

— Զրոյցի մը նայելով՝ Եէնի Գա- բուցի մի քանի օրհորդներ որոշեր են

առանց գլխարկի եկեղեցի երթալ։ (Չենք գիտեր թէ յիշեալ պարզապէս օրհորդները ի յարգանս եկեղեցւոյ կը զրկուին իրենց թուալէթէն, թէ ոչ ի յարգանս քսակին որ տրուի սեղօն գլխարկին գինը թերեւս չի կրնար հայթայթել։ Ծ. Խ.)։

— Բանկալթիէն մեզ կը գրեն թէ Տիկին մի՛ որուն սովորութիւնն է 48 ժամը անդամ մը հաց ուտել, անցիտ օր սակի մը կորսնցնելով որոշեր է 91 օր ցամաք հաց ուտել իր վնասը հանե- լու համար։ (Աստուած շատ քաջել չի տայ)։

— Հռչակաւոր ձեռնածու Միսիւ Բազնէօվ Պօլիս հասաւ ուր պիտի սկը- սի իր ներկայացումներու շարքը։ (Ի- մին աչքէս խուշ չի թռիւր ըսող մեծ- խօսիկ յաւակնոտները ջերմապէս կը յանձնարարուին երթալ տեսնել և ետ առնել խօսքերնին։ Ծ. Խ.)

— Կարեւոր թագի մը եկեղեցւոյն ժամկոչը անցեալ կիրակի վերնատու- նէն 140 սանթիմ տրամագիծով խաւ- չալըն մը գտած ըլլալով, տիրուհին յանձնելու համար կը խնդրէ մենէ ծանուցանել թէ՛ իբր վարձք իր ուղ- զամտութեան, կը բաւակաւանայ ան- գամ մը ենթակային դէմքը տեսնել։

— Բերայէն մեզ կը տեղեկացնեն թէ քօմնստի սիրահար զոյգ պատանի- ներ՝ իրենց ոտքերուն տակ մէյմէկ քեկիկ վաճառքի բանալ տալ որոշած են, պատյուն զգացած յոգնութիւնն առնելու համար։ (Ղալաթիոյ ռեսքը կը յանձնարարենք ջերմապէս, ուր ոչ թէ անկուտի ֆօքօյներ՝ այլ կարծեմ սուրճ ալ կը հրամցուի յաճախորդաց յոգնութիւնը առնել տալու համար)։

Արտօնատէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ
Պապը ալի ճատտեսի, քիւ 52

ՖԷՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԴ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ

ՊԵՆՆՔԻ ՃԻՒՂ


Դրամագրուիս եւ Պահեստի գումար

31,008,000 ՖՐԱՆԲ

ՀՐԴԵՂԻ ՃԻՒՂ

Դրամագրուիս եւ Պահեստի գումար

17,000,000 ՖՐԱՆԲ



ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք եւ կարասիք :

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք մարդկային կեանքի վրայ :

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ շոգե- նաւի՝ եւ առագաստանաւի վրայ :

Ընկերութեանս գրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլիս, Ալեանաք խան, Թիւ 11—16 :

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ :

Լիսզոր ներկայացուցիչ
Գ. ՖԷՐԱՏԵԱՆ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԶԱՆԳԵՐՁԵՂԻՆԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ԳԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ


Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Գ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփաշեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաջ տոկունութեամբ եւ գիներու անմրցելի աժանութեամբը շահած է բոլոր իրեն դիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց բեղրոխներու եւ տղայոց շիք եւ դիմացկուն փօքիւն- ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ շերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի եւ ուրիշ նմանո- ըինակ պիտոյից :

Սակարկութիւն չկայ՝ Թիւր 2 զրշ. է :

Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին : 50—7



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆԻ

ՓՈԳՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ զուտ սննդային մասերն եզան մսին, ուղեղին, ողնուղեղին և ֆոսֆաթներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ :

Պոլիս նոր բերուած այս անզուգական կազդուորիչ դեղը, 27 տարիներէ ի վեր ծանօթ և գնահատուած ընդհանուր Ամերիկայի, Անգղիոյ, Ճաբոնի և Չինու համաբաւարար բժիշկներէն. չերմայէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան «ուժասպառութիւն, դալկութիւն, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր չղային տկարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անախորժութիւն » :

Անգամ մը գործածութիւնը կը հաստատէ իր անզուգական յատկութիւնը :

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐՆԱՆ ԵՂԱՐԲ, Պահճէ-գաբու, Օսմանեան նամակատան ետեւի կողմը : Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և դեղօրէից միջերանոցներու քով :

